

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2020թ. փետրվարի 5-ի նիստի

Խորհրդի 41 անդամներից ներկա էին 29-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

Օրակարգ

1. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ստեփանյան):

2. 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի թեկնածուների երաշխավորում:

3. Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

4. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի՝ 2019-2024թթ. զարգացման հայեցակարգից բխող գործողությունների պլանի և ժամանակացույցի հաստատում (զեկ.՝ Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Ա.Մարգարյան):

5. 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփում:

6. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ստեփանյան):

Ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ստեփանյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակազատվածում ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

2. ԼՍԵՑԻՆ. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ երաշխավորել հետևյալ անձանց.

1. Խաչատրյան Մերի Կարենի (մագիստրատուրա, 1-ին տարի) Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ.

2. Մարտիրոսյան Վիկտորյա Տիգրանի (բակալավրիատ, 3-րդ տարի)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ.

3. Վարտումյան Զավեն Համբարձումի (բակալավրիատ, 4-րդ տարի)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած Վլադիկ Ներսեսյանցի անվան կրթաթոշակ.

4. Բակլաչյան Դավիթ Աբելի (մագիստրատուրա, 1-ին տարի)՝ Յուրի Ղամբարյանի անվան կրթաթոշակ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. **ԼՍԵՑԻՆ.** Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Պետական քննական հանձնաժողովների նախագահներն ամփոփ տեղեկություններ ներկայացրին մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, դոց. Ա.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն (հաշվետվությունները կցվում են):

4. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի՝ 2019-2024թթ. զարգացման հայեցակարգից բխող գործողությունների պլանի և ժամանակացույցի հաստատում (զեկ.՝ Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Ա.Մարգարյան):

Դոց. Ա.Մարգարյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց 2019-2024թթ. զարգացման հայեցակարգից բխող գործողությունների պլանի և ժամանակացույցի վերաբերյալ՝ հավելելով, որ դրա գրավոր տարբերակը մոտ ժամանակում կուղարկվի խորհրդի բոլոր անդամներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. **ԼՍԵՑԻՆ.** 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփում:

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունելի գիտություն:

6. Ընթացիկ հարցեր

6.1 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը Սևակ Պողոսյանին որպես ամբիոնի հայցորդ ձևակերպելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Սևակ Պողոսյանին ձևակերպել որպես ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.2 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը Նելլի Տեր-Թորոսյանին որպես ամբիոնի հայցորդ ձևակերպելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Նելլի Տեր-Թորոսյանին ձևակերպել որպես ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.3 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ԱրՊՀ իրավունքի ամբիոնի հայցորդ Գեղամ Հարությունյանի ատենախոսության թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառությունը և գիտական ղեկավարին հաստատելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ԱրՊՀ իրավունքի ամբիոնի հայցորդ Գեղամ Հարությունյանի՝ «Զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման հիմնախնդիրները /Արցախի Հանրապետության նյութերով/»

վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, մասնագիտությունը՝
ԺԲ.00.05– «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Գաբուզյանին.

Խորհրդի նախագահ

Գ.Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն

Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

2018-2019 ուս.տարվա ընթացքում ամբիոնում կատարվող աշխատանքների մասին

1. Գիտական գործունեություն

Գիտահետազոտական աշխատանքներ

Ամբիոնի անդամների կողմից հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել է 3 գիտական հոդված, 1 մենագրություն, 1 ուսումնական ձեռնարկ, 1 դասախոսության տեքստ:

Հոդված

1. **Չոբանյան Գրիգոր** - Պետությունների ինքնիշխանությունը ժամանակակից գլոբալիզացման պայմաններում, «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու», ԵՊՀ հրատարակչություն, էջեր 405-418:

2. **Սարգսյան Արման** - Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի կիրառման արդի հիմնախնդիրները, «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու», ԵՊՀ հրատարակչություն, էջեր 454-463:

3. **Սարգսյան Նորա, Լուիսթերհանդթ Օտտո (համահեղ.)** - Երեխայի իրավունքների կարգավորումը ըստ ՀՀ Սահմանադրության 2015թ. խմբագրությամբ, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2019 № 2 (29), էջեր 23-36:

Մենագրություն

1. **Վարդանյան Քնարիկ** Փախստականների և ապաստան հայցողների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավական ակտերը և դրանց ազգային իրավական իմպլեմենտացիան, «ԵՊՀ» հրատարակչություն, Երևան, 2018, 144 էջ

2. **Ստեփանյան Վահե** Особенности моделей формы государственного правления Армении, 2018, 50 էջ:

Ուսումնական ձեռնարկ

1. Վարդանյան Քնարիկ Փախստականների միջազգային իրավական և ներպետական պաշտպանությունը, «Հայրապետ» հրատարակչություն, Երևան, 2018, 256 էջ:

Ամբիոնի պրոֆեսոր, իր. գիտ. դոկտոր **Վ.Հովհաննիսյանը** պատրաստում է միջազգային իրավունքի ուսումնական ձեռնարկ/ ենթադրաբար աշխատանքները կավարտվեն մինչև 2020թ. սեպտեմբերին/:

Դասախոսության տեքստ

1. Վարդանյան Քնարիկ Փախստականների միջազգային իրավական պաշտպանությունը, 2019 (տեղադրված է ԵՊՀ www.intranet.y-su.am ինտերնետային հարթակում):

Ամբիոնում պարբերաբար նիստերի ընթացքում ներկայացվում են ամբիոնի անդամների հաղորդումները և գիտական զեկուցումները:

Մասնակցություն գիտաժողովներին

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնն ակտիվորեն մասնակցել է ՀՀ-ում և արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին և գիտահետազոտական ծրագրերին: Ամբիոնի անդամները մասնակցել են հետևյալ գիտաժողովներին.

1. Ֆրանսիայի Հանրապետության Ստրասբուրգ քաղաքում Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի 32-րդ լիազումար նիստ, 13-14 հունիս, 2019թ. Ստրասբուրգ, Ֆրանսիայի Հանրապետություն:
2. Եվրոպայի խորհրդի Իրավական համագործակցության եվրոպական կոմիտեի (CDCJ) 94-րդ լիազումար նիստ, նոյեմբերի 13-15, 2019թ., Ստրասբուրգ, Ֆրանսիայի Հանրապետություն:
3. «Արժանապատվություն, ժողովրդավարություն, բազմազանություն» թեմայով XXIX IVR Համաշխարհային կոնգրես (7-13 հուլիս 2019), Շվեյցարիա, Լյուցեռն:

4. Աշնանային դպրոց «Ապակենտրոնացում և տեղական կառավարում» վերտառությամբ, սեպտեմբեր 23-37, 2019, Բեռլին, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն:
5. Յունիդեմ գիտաժողով «Ժողովրդավարության կարգավիճակը երկաթե վարագույրի անկումից 30 տարի անց» թեմայով՝ կազմակերպված Իրավունքի միջոցով ժողովրդավարության Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) և Լոնդոնի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի կողմից, 6-7 մայիս, Լոնդոն, Շվեդիա:
6. Վիլլեմ Ս. Վիսի անվան Միջազգային կոմերցիոն արբիտրաժ դատախազ-մրցույթ, Վիեննա, Ավստրիա, 12-17 ապրիլ:
7. «Փախստականների իրավունք» խորագրով 9-րդ ամառային դպրոց՝ կազմակերպված ՄԱԿ ՓԳՀ-ի աջակցությամբ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից հայկական առաջատար բուհերի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների մասնակցությամբ, հոկտեմբեր 11-13, 2019, Դիլիջան, Հայաստան:
8. «Իրավունքի հետ խնդիրներ ունեցող անչափահասները» թեմայով վերապատրաստման դասընթաց՝ կազմակերպված Կանադայի Կարլետոն համալսարանի կողմից ԵՊՀ-ի, Կարլետոնի համալսարանի և Կուֆայի համալսարանի միջև համագործակցության շրջանակներում, հոկտեմբերի 22-25, Երևան, Հայաստան:
9. «Գենդերը և անչափահասների արդարադատությունը Մերձավոր Արևելքում» վերտառությամբ գիտաժողով՝ կազմակերպված ԵՊՀ-ի, Կանադայի Կարլետոնի համալսարանի և Իրաքի Կուֆայի համալսարանի միջև համագործակցության շրջանակներում, ապրիլ 25-29, 2019, Ստամբուլ, Թուրքիա:

2. Ուսումնական գործունեություն

Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք

ա) Ուսումնական պլան, ուսումնական ծրագրեր

Ամբիոնի անդամները դասավանդել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում, ինչպես նաև տնտեսագիտական ֆակուլտետում, ԵՊՀ

Եվրոպական հետազոտությունների կենտրոնի մագիստրատուրայում, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում:

Ամբիոնը շարունակում է դասավանդումը ֆակուլտետի Մեթոդխորհրդի կողմից ներկայացված չափանիշների հիման վրա վերանայված ծրագրերով, յուրաքանչյուր քննության և ստուգարքի համար կազմվել են համապատասխան առարկաների հարցաշարերը:

Ամբիոնի կողմից կազմակերպվել է դասընթաց «Միջազգային դատախազերի մասնակցության հմտություններ» վերնագրով, որը վարում էր ամբիոնի ասիստենտ /ասպիրանտ/ Գ.Զոբանյանը: Ծրագրին կարող էին մասնակցել բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր ուսանողները: Դասընթացների ավարտին մասնակիցները ձեռք են բերել հմտություններ, որոնք էականորեն կնպաստեն միջազգային մրցույթներում հաջող մասնակցությանը:

բ) Մեթոդական աշխատանք

Ամբիոնի անդամների վերապատրաստման գործընթացում մեծ ուշադրություն է դարձվել դասավանդման առաջատար մեթոդիկաների ուսումնասիրությանը և գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում քննարկման առարկա են դարձել դասավանդման մեթոդիկայի բարելավումն ու նոր մեթոդների կիրառումը: Արդյունքում ամբիոնը ներդրեց գիտելիքների ստուգման նոր եղանակներ, հատկապես ընթացիկ քննությունների իրականացման գործընթացում: Կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ավելացման նպատակով «Միջազգային պայմանագրերի իրավունք» առարկայի ընթացիկ քննությունն իրականացվել է հետազոտական աշխատանքների նախապատրաստման և պաշտպանության ձևով:

Մագիստրատուրայի առանձին առարկաների դասավանդումն ավելի որակյալ և ինտերակտիվ անցկացնելու նպատակով ներդրվել են դասավանդման նոր մեթոդներ e-learning/moodle համակարգով, որը բարեհաջող կերպով դասավանդվել է ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից:

Նկատի ունենալով, որ կրեդիտային համակարգի պայմաններում կարևորվում է ինքնուրույն աշխատանքի կատարումը, ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը որակով և ժամանակին պաշտպանության ներկայացնելու

նպատակով ամբիոնն այդ ուղղությամբ ձեռնարկել է որոշակի աշխատանքներ: Հանձնարարվել է դասախոսներին առնվազն ամիսը մեկ անգամ հանդիպել ուսանողների հետ, ճշտել նրանց կողմից կազմված աշխատանքի պլանը, օգնել գրականության ցանկի պատրաստման և ընթացիկ հարցերում:

2018-2019 ուս.տարվա *երկրորդ կիսամյակի*՝ ուսանողության շրջանում անցկացրած հարցումների արդյունքում ամբիոնի միջին գնահատականը կազմում է 4.47:

Ասպիրանտների, հայցորդների հետ տարվող աշխատանք և կադրերի վերապատրաստում

Ամբիոնն ունի 1 *առկա* ուսուցմամբ ասպիրանտ /Չոբանյան Գրիգոր/, 2 *հեռակա* ուսուցմամբ ասպիրանտ /Թովմասյան Նազելի, Աբովյան Արթուր/ և 1 *հայցորդ* /Մանուկյան Ռոմելա/: Ենթադրվում է, որ այս տարի նրանցից երեքը դուրս կգան պաշտպանության: Այս հանգամանքը կարող է նպաստել ամբիոնում նոր երիտասարդ կադրերի համալրման գործընթացին: Պարբերաբար քննարկվում են նրանց աշխատանքի ընթացքը, գիտական հոդվածները երաշխավորվում են տպագրության, այլ աջակցություն է ցուցաբերվում նրանց աշխատանքին: Ամբիոնի ասպիրանտներն ու հայցորդներն ակտիվորեն ներգրավված են նաև ուսումնական պրոցեսում:

Բացի դրանից, ամբիոնում պարբերաբար հաստատվում են այլ բուհերի ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների թեմաներ, և ամբիոնի անդամների թվից նշանակվում են նրանց գիտական ղեկավարներ: Ատենախոսությունը ներկայացնելու դեպքում կազմակերպվում է նաև դրանց նախապաշտպանությունը:

Իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրում

Ամբիոնն ապահովում է առանձին դասընթացների շրջանակներում որոշակի թեմաներով ուսումնական գործընթացին դասավանդող դասախոսների հետ համատեղ պրակտիկ աշխատողների մասնակցությունը, առանձին դասընթացների

շրջանակներում ուսումնասիրվում են միջազգային և ներպետական դատական ատյանների պրակտիկ գործեր, ներառյալ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ և այլն: Միջազգային պրակտիկայի կիրառման վերաբերյալ մի շարք հարցեր ընդգրկված են նաև քննական տոմսերում:

Կրթական ծրագրերի արդիականացում ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան

Ամբիոնի կողմից արդեն իսկ արդիականացվել է բակալավրիատի կրթական ծրագիրը:

Ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերի արդիականացում

Եվրոպական և միջազգային իրավունք մասնագիտացման դասընթացի շրջանակում ընդգրկված դասընթացների մեծ մասը ապահովված է հայալեզու գրականությամբ: Ամբիոնը աշխատանքներ է իրականացնում Միջազգային իրավունք նոր դասագրքի հրատարակման ուղղությամբ: Ուսումնական նյութերի կառուցվածքն ու բովանդակությունը արդիականացնելու, դրանց պահանջվածությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ամբիոնը նպատակ է հետապնդում մի շարք դասընթացների համար պատրաստել ուսումնական ձեռնարկներ, մենագրություններ:

Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում

Ամբիոնի աշխատակիցները պարբերաբար մասնակցում են միջազգային և ներպետական գիտաժողովների, քննարկումների, ինչպես նաև ԵՊՀ-ի կողմից սահմանված կարգով մասնակցում են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացներին:

Պրոֆեսորադասախոսական կազմի համալրում

Ամբիոնը միջոցներ է ձեռնարկում դասախոսական կազմի համալրման ուղղությամբ: Հիմնական դասընթացների գործնական պարապմունքներն անցկացնում են ամբիոնի նախկին և ներկա ասպիրանտները:

Հեռակա բաժնում ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում.

- դասընթացները համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով ապահովելու նպատակով թարմացվել և կայքում զետեղվել են առարկայական ծրագրերը, որոշ ուսումնական և ուսումնաօժանդակ նյութեր:

Արտահամալսարանական գործունեություն.

- ամբիոնի դոցենտ Վ. Քոչարյանը հանդիսանում է Եվրոպայի խորհրդի արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի անդամ, ԱՊՀ արդարադատության նախարարների խորհրդի աշխատանքային խմբի ղեկավար
- ամբիոնի ասիստենտ Վ. Վարդանյանը հանդիսանում է Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոն, Ցեղասպանության հետազոտությունների միջազգային ասոցացիայի անդամ:

Ամբիոնի վարիչ՝

Վ. Ստեփանյան

19.11.2019թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*«ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԾՐԱԳՐՈՎ
2019-2020թթ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Մագիստրոսական թեզերի պաշտպանություն:

2020թ. հունվարի 21-ին տեղի ունեցավ «Իրավունքի տեսություն և սահմանադրական իրավունք» ծրագրով մագիստրոսական թեզերի պաշտպանությունը:

Պաշտպանության ներկայացվեց 13 մագիստրոսական թեզ, որոնցից 9 ուսանող ստացավ «գերազանց» գնահատական, 2 ուսանող «լավ» գնահատական, 2 ուսանող՝ «բավարար» գնահատական:

Ընդհանուր բնույթի եզրահանգումներ:

Պետական քննական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են իրավագիտության ֆակուլտետի դեկանատի կողմից նախատեսված ժամանակացույցին համապատասխան:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությունն իրականացվել է հրապարակայնորեն՝ նախատեսված նորմատիվ պահանջների պահպանմամբ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի և պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի կողմից մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության ժամանակ հաշվի են առնվել իրավական մտքի արդի զարգացումները և այն մարտահրավերները, որոնց իրավական կարգավորումները ժամանակակից հասարակական հարաբերությունների կանոնակարգման տեսանկյունից ունեն առաջնահերթ նշանակություն: Մինևույն ժամանակ, առանձին դեպքերում ընտրվել են չափազանց ընդհանուր բնույթի և լայն թեմաներ, ինչից, կարծում եմ, հետագայում անհրաժեշտ է խուսափել:

Թեև աշխատանքներն ընդհանուր առմամբ աչքի էին ընկնում հեղինակների կողմից նյութի տիրապետման և ներկայացման աստիճանով, սակայն դրանց մի մասն ուներ սոսկ ճանաչողական, նկարագրական բնույթ, աշխատանքի շրջանակներում կատարված չէր գիտական հետազոտությունների մեթոդաբանությանը համապատասխան՝ անհրաժեշտ վերլուծություն: Կարծում եմ, որ նշված խնդիրն առաջիկայում ունի հաղթահարման անհրաժեշտություն՝ առաջին հերթին գիտական աշխատանքներին ներկայացվող չափանիշների վերախմաստավորման և

աշխատանքների ներկայացման հմտությունների զարգացման տեսանկյունից, և պետք է անընդհատ գտնվի ամբիոնների ուշադրության կենտրոնում:

Ի տարբերություն նախորդ տարիների՝ աշխատանքների մեծամասնությունում վերլուծված էր համարժեք գիտական գրականություն:

Թեզերի մեծամասնությունն իրականացված էր աշխատանքներին ներկայացվող ձևական պահանջների պահպանմամբ: Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ աշխատանքի՝ պահանջվող բովանդակային մասերի վերնագրերի առկայությունը չէ, որ վկայում է պահանջների պահպանվածության մասին: Անհրաժեշտ է համապատասխան մասերի բովանդակությունը շարադրել՝ դրանց ենթադրյալ համատեքստին համապատասխան: Օրինակ՝ աշխատանքի նպատակին և խնդիրներին առնչվող հատվածը չի կարող վերաբերել զուտ թեմայի նկարագրությանը, կամ թեմայի արդիականությանն առնչվող հատվածը պետք է ուղղված լինի հեղինակի կողմից թեմայի արդիականության հիմնավորումներին և ոչ այլ տեղեկատվության մատուցման:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ ժամանակակալից գիտությունն ընթանում է միջդիսցիպլինար հետազոտությունների իրականացման ուղղությամբ: Պատճառն այն է, որ առավել ճշգրիտ գիտական եզրահանգումները հնարավոր են սոսկ երևույթների բոլոր ասպեկտների հետազոտության, վերլուծության և ամփոփման արդյունքում: Ակնհայտ է, որ սահմանադրափրավական ինստիտուտների առնչությամբ եզրահանգումները ևս չեն կարող հավաստի և ամբողջական լինել սոսկ իրավական հետազոտության արդյունքում և ենթադրում են նաև քաղաքական, հոգեբանական, սոցիոլոգիական և այլ ասպեկտների վերլուծություն: Կարծում ենք, որ եզրահանգումների հավաստիությունն ու ամբողջականությունը երաշխավորելու տեսանկյունից մագիստրոսական թեզերի շրջանակներում անհրաժեշտ է հենց նման միջդիսցիպլինար հետազոտության իրականացումն ու նաև քաղաքագիտության, քաղաքական հոգեբանության, սոցիոլոգիայի և այլ վերաբերելի գիտությունների շրջանակներում առկա տվյալների, մեթոդաբանության, կատարված եզրահանգումների վերլուծությունն ու ամփոփումը:

Աշխատանքների առնչությամբ ներկայացված գրախոսականների մեծամասնությունը ևս կատարված էին պատշաճ մակարդակով:

Կարծում եմ, որ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել նաև ուսանողների մոտ վերլուծական մտածողության և նյութը ներկայացնելու հմտությունների զարգացմանը: Այդ առումով առաջնահերթ նշանակություն ունի կարծրատիպային և մեխանիկական մտածողության հաղթահարումը, ինչը երբեմն նկատելի է ուսանողների մոտ: Դասագրքում կամ ձեռքի տակ եղած իրավական ակտում ներկայացված գաղափարների մեխանիկական վերարտադրությունը չի կարող գիտելիքի գնահատման և գիտական հետազոտության իրականացման առանցքային չափանիշ հանդիսանալ: Ավելին, դասագիրքն էլ ուսանողի կողմից չպետք է դիտարկվի որպես հիմնախնդրին ծանոթանալու միակ աղբյուր: Հետևաբար, գիտական հետազոտության իրականացման ու հետազայում դրա գնահատման հիմնական չափանիշը պետք է լինի ոչ թե կարդացածի անգիր ու մեխանիկական

վերարտադրությունը, այլ կատարված գիտական հետազոտության որակն ու այն ներկայացնելու հմտությունները:

Պետական քննական հանձնաժողովի նախագահ,
Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր,
Ի.գ.թ., դոցենտ
31.01.2020թ.

Ա. Մանասյան

*ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ*

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎՍ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2020թ. հունվարի 29-ին տեղի ունեցավ ամբիոնի ,Եվրոպական և միջազգային իրավունք» մասնագիտացման մագիստրոսական թեզերի պաշտպանությունը:

,Եվրոպական և միջազգային իրավունք» մասնագիտացման շրջանակներում պաշտպանության ներկայացվեց 20 մագիստրոսական թեզ, որոնցից 11-ը՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրանտների և 9-ը՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրանտների կողմից: Պաշտպանության ներկայացված 20 մագիստրոսական թեզերից 5-ը արժանացան ,գերազանց» գնահատականի, 14-ը՝ լավ, իսկ 1-ը՝ ,բավարար» գնահատականի:

Ընդհանուր բնույթի եզրահանգումներ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի կողմից մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության ժամանակ հաշվի են առնվել ներկա աշխարհագրական զարգացումները և գլոբալ այն մարտահրավերները, որոնց իրավական կարգավորումները միջազգային իրավունքի առաջնային խնդիրների շարքին են դասվում:

Պետական քննական հանձնաժողովի աշխատանքները, որոնք կազմակերպվել են իրավագիտության ֆակուլտետի դեկանատի կողմից նախատեսված ժամանակացույցին համապատասխան, անցել են առանց թերացման:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությունն ընթացել է հրապարակայնորեն՝ նախատեսված նորմատիվ պահանջների և արդարության տարրական կանոնների պահպանմամբ:

Մագիստրոսական թեզերի որակը, դրանց հեղինակների կողմից նյութի տիրապետման և ներկայացման վիճակը հատկապես բավարար են ցերեկային բաժնի ուսանողների մոտ:

Պաշտպանության ներկայացված թեզերը համապատասխանում են գիտական հետազոտություններին ներկայացվող պահանջներին և տարբերվում են ավարտական աշխատանքներից: Կարծում եմ այս փաստը պետք է մշտապես գտնվի ամբիոնի և նրա դասախոսությունների ուշադրության կենտրոնում:

Հանձնաժողովի անդամների և գրախոսների մասնակցությունը

Աշխատանքների որակը /այդ թվում բարձր մոգ ունեցող մագիստրանտների/

*Պետական քննական հանձնաժողովի նախագահ,
ՄԻԵԴ-ու ՀՀ ներկայացուցիչ, իրավ.գիտ.թեկնածու, աստիտենտ՝*

Ե. Կիրակոսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
Քաղաքացիական իրավունք և դատավարություն և գործարարական իրավունք
մասնագիտացմամբ մագիստրոսական ծրագրերի 2019-2020թթ. ամփոփիչ
ատեստավորման արդյունքների

Ամփոփիչ ատեստավորման արդյունքներն ընդհանուր առմամբ վկայում են շրջանավարտների պատշաճ պատրաստվածության մասին: Մասնավորապես, ասվածի հիմնավորումն են հանդիսանում ստորև բերված ցուցանիշները:

	ուսանող	գերազանց	լավ	բավարար	անբավ.	չհներկ.
Մագիստրական թեզ						
Քաղ. իր. և դատավարություն	8	7	1	-	-	-
Գործարարական իրավունք	7	6	0	-	-	1

Ներկայացված վիճակագրական տվյալների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս որոշակի եզրահանգումներ անել մագիստրատուրայում (առկա) ուսուցման գործընթացի արդյունավետության, ուսանողների որակի և առաջադիմության, ինչպես նաև քննաշրջանի կազմակերպչական մի շարք հարցերի վերաբերյալ: Այսպես՝ իրենց գիտելիքներով ու պատրաստվածությամբ առանձնանում էին մագիստրոս շրջանավարտները: 14-ից 13-ը արժանացել է գերազանց գնահատականի, 1-ը՝ լավ: Նշված ցուցանիշները մի կողմից փաստում են մագիստրատուրայում կրթական ծրագրերի և դասավանդման բարձր որակի մասին, մյուս կողմից՝ մագիստրոսների և նրանց ղեկավարների բարեխիղճ աշխատանքի հավաստիքն են: Մագիստրոսական թեզերում գրեթե բոլորը ներառել էին իրենց ուսումնասիրության արդյունք հանդիսացող առաջարկությունները և հաճախ նաև ներկայացրել ինքնատիպ եզրահանգումներ: Այդ աշխատանքներից որոշներն ապագայում կարող են թեկնածուական թեզերի հիմք հանդիսանալ: Հատկապես ողջունելի է վարչական դատավարության գծով մագիստրոսական թեզի նախաձեռնությունը՝ նկատի ունենալով այն, որ վարչական դատավարությունն իրավունքի համեմատաբար նոր ճյուղ է և ներկայացնում է թե՛ տեսական, և թե՛ գործնական մեծ հետաքրքրություն:

Միաժամանակ ցանկանում են անդրադառնալ նաև այն բացթողումներին, որոնց հետ առնչվեցին քննական գործընթացի շրջանակներում:

1. Քննության ընթացքում պարզ դարձավ, որ այն ուսանողները, ովքեր մագիստրատուրայում ուսումնասիրում են վարչական դատավարություն և մագիստրատական աշխատանք են գրել նշված առարկայի շրջանակներում, ոչ բավարար են տիրապետում վարչական իրավունքին: Կարծում են այս 2 առարկաների առանձնացումը և ներկայումս և ապագայում էլ կարող է բավականին լուրջ խնդիրներ առաջացնել, քանի որ անհնար է պատկերացնել վարչական դատավարությունն առանց վարչական իրավունքի: Օրինակ՝ անձը աշխատանք է ներկայացնում հայցատեսակների մասին, սակայն աշխատանքի հեղինակը տեղեկացված չէ վարչական ակտերի մասին: Պրակտիկայում անհնարին է նման տարբերակով աշխատելը, քանի որ, եթե անձը խորացված չի տիրապետում վարչական ակտի հասկացությանը, լավ պատկերացում չունի դրա տեսակների վերաբերյալ, կամ չի տարբերակում «անվավերություն» և «առ ոչնչություն» եզրույթները, նա որևէ կերպ չի կարող հստակ պատկերացում կազմել վարչական դատավարության նույնիսկ հայցատեսակների մասին:

Համեմատական կարգով ասենք, որ անհնարին է պատկերացնել քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության ոլորտն առանց համապատասխանաբար քաղաքացիական կամ քրեական իրավունքի: Որքան էլ դրանց ուսումնառությունն իրականացվում է տարբեր ամբիոնների կողմից, միևնույնն է, դրանք ներառված են նույն մասնագիտացման շրջանակներում: Կարծում են, նշված կարգավորումը պետք է տարածել նաև վարչական դատավարության և վարչական իրավունքի վրա:

2. Հարկ է նաև նշել, որ անհրաժեշտ է կարգավորման ենթարկել աշխատանքը գրախոսման ներկայացնելու ժամկետները՝ հիմքում ունենալով այն հանգամանքը, որ դրանք բավականին սեղմ են և հաճախ գրախոսը չի ունենում բավարար ժամանակ աշխատանքը մանրամասն ուսումնասիրության առարկա դարձնելու և համապարփակ կարծիք արտահայտելու համար:

3. Ստահոգիչ է նաև աշխատանքների վերաբերյալ գրախոսների կարծիքները: Քննական գործընթացի արդյունքում ստեղծվել է այն տպավորությունը, որ հաճախ գրախոսն ամբողջությամբ չի ծանոթացել աշխատանքի բովանդակությանն ու էությանը, իսկ կարծիք հայտնել է զուտ կարծիք հայտնելու համար: Կարծում են, գրախոսը պետք է ունենա հնարավորություն աշխատանքն ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրելու և վեր հանելու ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերը, աշխատանքի առավելություններն ու թերությունները, որը հաճախ բացակայում էր: Քննական հանձնաժողովի համար շատ դեպքերում ավելի հանոգիչ էին գրախոսականների վերաբերյալ ուսանողների արձագանքներն, քան գրախոսների կարծիքներում նշված դիտողությունները:

4. Որոշակի մտահոգությունների տեղիք են տալիս աշխատանքների թեմաները: Առկա է ինչևիցե աշխատանքների թեմաներ, որոնք բավականին ընդհանրական էին: Որոշ դեպքերում թեմաները շատ տեսական էին, նաև նախկինում քննարկված: Կարծում են ավելի նպատակահարմար է թեմաների ընտրության հիմքում դնել օրենսդրական նախաձեռնություններում բարձրացված, կամ դատաիրավական բարեփոխումների

հայեցակարգերով կամ միջազգային փորձագետների եզրակացություններում՝ լրացուցիչ ուսումնասիրության ենթակա հարցադրումները: Այս մեթոդաբանությունը հնարավորություն կտա, որպեսզի հետազոտություններ կատարելու ունակ շրջանավարտները փորձեն իրենց ուժերը նոր տեսակետներ առաջադրելու հարցում, ու ը կապահովի թեմայի արդիականությունը::

Նպաստավոր կլինի նաև դատական պրակտիկայում արձանագրված խնդրահարույց որոշ հարցերի վեր հանումը և ուսումնասիրությունը: Դրանք թույլ կտան ուսումնասիրություններն ուղղել գործնականում առավել վիճելի խնդիրների բացահայտմանը, ինչն, անշուշտ, նպաստելու է գիտության և պրակտիկայի համահունչ զարգացմանը:

Ամփոփելով՝ պետք է նշեն, որ պետական քննությունների հանձնաժողովին հաջողվեց ձևավորել զուտ քննական մթնոլորտ, հնարավորինս բացառել մագիստրոսական թեզեր ներկայացնողների մոտ անհարկի հուզվածությունն ու շփոթվածությունը:

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍ ԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

20-29 Հունվարի 2020թ.

Մագիստրոսական թեզի ամփոփիչ ատեստավորման են մասնակցել

75 ուսանող, չեն մասնակցել 3 ուսանող:

1. Քրեական իրավունք և կրիմինալիստիկա մասնագիտացում՝ 20 ուսանող

- գերազանց 13
- լավ 7
- բավարար 0
- անբավարար 0
- չներկայացած 0

1. Կրիմինալոգիա մասնագիտացում՝ 10 ուսանող

- գերազանց 6
- լավ 4
- բավարար 0
- անբավարար 0
- չներկայացած 0

2. Քաղաքացիական իրավունք և դատավարություն՝ 8 ուսանող

- գերազանց 7
- լավ 1
- բավարար 0
- անբավարար 0
- չներկայացած 0

3. Գործարարական իրավունք՝ 7 ուսանող

- գերազանց 6
- լավ 0

- բավարար 0
- անբավարար 0
- չներկայացած 1

4. Իրավունքի տեսություն և սահմանադրական իրավունք՝ 13 ուսանող


- գերազանց 9
- լավ 2
- բավարար 2
- անբավարար 0
- չներկայացած 0

5. Եվրոպական և միջազգային իրավունք՝ 20 ուսանող

- գերազանց 5
- լավ 14
- բավարար 1
- անբավարար 0
- չներկայացած 2

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի՝ 2019-2020 ուս. տարվա մագիստրոսական թեզերի պաշտպանություններն աչքի են ընկել կազմակերպվածության բարձր մակարդակով, ընթացել են իրավագիտության ֆակուլտետի դեկանատի կողմից նախատեսված ժամանակացույցին համապատասխան, և այդ հարցում որևէ շեղում կամ թերացում չի եղել: Մագիստրոսական թեզերի պաշտպանությունը կազմակերպվել է հրապարակայնորեն՝ նախատեսված նորմատիվ պահանջների պահպանմամբ:

ԱԱՀ ՆԱԽԱԳԱՀ



Ս.Առաքելյան

10.02.2020թ.